

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի դիրքը միջազգային վարկանիշներում և ինդեքսներում» 2026

Ամփոփ նկարագիր՝ Հայաստանի դիրքը միջազգային ինդեքսներում և վարկանիշներում

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարկանիշ/ինդեքս	2020	2021	2022	2023	2024	2025	2026
Moody's վարկանիշ	Ba3	Ba3	Ba3	Ba3	Ba3	Ba3	Ba3
Fitch վարկանիշ	BB-	B+	B+	BB-	BB-	BB-	BB-
S&P Global վարկանիշ	B+	B+	B+	BB-	BB-	BB-/B	BB-/B
Տնտեսական ազատության համաթիվ	34/180	32/178	58/177	50/176	47/184	57/184	52/184
Գլոբալ նորարարության համաթիվ	61/131	69/132	80/132	72/132	63/133	59/139	59/139
Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման համաթիվ	N/A	61/117	N/A	N/A	72/119	TBD	72/110
Տնտեսական բարդության համաթիվ	75/130	72/132	67/131	57/132	46/146	TBD	TBD
Կոռուպիցիայի ընկալման համաթիվ	60/180	58/180	63/180	62/180	63/180	65/182	-

Fitch վարկանիշ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Fitch-ը վերահաստատել է Հայաստանի Հանրապետության թողարկողի դեֆոլտի երկարաժամկետ վարկանիշը՝ «BB-» մակարդակում, պահպանելով վարկանիշի «դրական» հեռանկարը: «BB-» վարկանիշն (դրական հեռանկար) արտացոլում է՝

- բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտը,
- կայուն մակրոտնտեսական քաղաքականության շրջանակը,
- աճի կայուն հեռանկարները,
- կառավարման չափավոր ցուցիչները,
- համանման երկրների համեմատ բյուջեի դեֆիցիտի բարձր ցուցանիշը,
- արտաքին ֆինանսավորման ցածր մակարդակը,
- ֆինանսական հատվածի դոլարիզացման բարձր մակարդակը,
- աշխարհաքաղաքական ռիսկերը:

➢ «Դրական» հեռանկարը պայմանավորված է Հայաստանի միջազգային պահուստների ավելացմամբ, տնտեսական աճի բարձր տեմպերով և միջնաժամկետ հատվածում պետական պարտքի հարաբերակցության կայունացման ակնկալիքներով: Վարկանիշային գործակալությունը դրական է գնահատում նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության գործընթացի առաջընթացի հնարավորությունը:

➢ Միաժամանակ պահպանվում են աշխարհաքաղաքական զգալի ռիսկեր՝ կապված խաղաղության համաձայնագրի վերջնականացման, հնարավոր սահմանադրական հանրաքվեի և Ռուսաստանի հետ դիվանագիտական ու տնտեսական հարաբերությունների լարվածության հետ:

Fitch վարկանիշ
Հայաստան 2026

Տարի	Վարկանիշ
2015	B+
2016	B+
2017	B+
2018	B+
2019	BB-
2020	BB-
2021	B+
2022	B+
2023	BB-
2024	BB-
2025	BB-
2026	**BB-**

Moody's վարկանիշ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Moody's –ը Հայաստանի վարկունակությունը գնահատել է **«Ba3» կայուն հեռանարից փոխելով «դրական» հեռանկարի: վարկանիշը**, ինչը ցույց է տալիս, որ Հայաստանի վարկունակությանը սպառնացող ռիսկերը մնում են հավասարակշռված:

Հայաստանի Ba3 վարկանիշի գնահատումը հիմնված է տնտեսական աճի միջնաժամկետ կայուն ներուժի (մոտ 5%), արտադրողականության բարելավման միտումների և չափավոր ուժեղ ինստիտուտների և կառավարման վրա: 2022-2025 թթ. իրական ՀՆԱ-ի տարեկան միջին աճը կազմել է 8.5%, իսկ 2026-2027 թթ. համար կանխատեսվում է 5-5.5% աճ:

Սահմանափակող գործոններն են նաև աճող տոկոսային ծախսերը, պարտքի սպասարկելիության որոշակի թուլացումը, մնացող աշխարհաքաղաքական ռիսկերը, Ռուսաստանի հետ հարաբերությունների փոփոխությունից բխող անորոշությունները, ընթացիկ հաշվի զգալի պակասուրդը և օտարերկրյա ուղղակի ներդրումների՝ ՀՆԱ-ի շուրջ 2%-ի մակարդակը: 2025 թ. տոկոսային վճարները կազմել են պետական եկամուտների 11.5%-ը, իսկ պետական պարտքի բեռը կանխատեսվում է կայունացնել ՀՆԱ-ի շուրջ 50%-ում:
Դրական կանխատեսումը կարող է նպաստել Հայաստանի վարկային պրոֆիլի նկատմամբ շուկայի մասնակիցների ընկալման բարելավմանը, իսկ հետագա բարձրացումը կարող է աջակցել ֆինանսավորման պայմանների բարենպաստ գնահատմանը:

Բարձրացման համար գործակալությունը կարևորում է բարեփոխումների շարունակականությունը, տարածաշրջանային կայունության ամրապնդումը, արտահանման և գործարար միջավայրի բարելավումը, զբաղվածության հնարավորությունների ընդլայնումը, ներքին կապիտալի շուկաների խորացումը և պարտքի սպասարկելիության պահպանումը

Moody's վարկանիշ Հայաստան 2026

Տարի	Վարիկանիշ
2015	Ba3
2016	B1
2017	B1
2018	B1
2019	Ba3
2020	Ba3
2021	Ba3
2022	Ba3
2023	Ba3
2024	Ba3
2025	Ba3
2026	**Ba3**

Standard & Poor Global վարկանիշ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

S&P Global Ratings-ը 2026 թվականի օգոստոսի 21-ին հաստատել է Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ և կարճաժամկետ ինքնիշխան վարկային վարկանիշները՝ համապատասխանաբար «BB-» և «B», ինչպես արտարժութային, այնպես էլ տեղական արժույթով պարտավորությունների մասով: Երկարաժամկետ վարկանիշի կանխատեսումը պահպանվել է դրական (Positive):

Դրական կանխատեսումը պայմանավորված է այն ակնկալիքով, որ Հայաստանը կկարողանա շարունակել արտաքին կայունության ամրապնդումը, կուտակել արտաքին պահուստներ և առաջընթաց արձանագրել Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: :

Գործակալությունը շարունակում է Հայաստանի հիմնական սահմանափակումներից մեկը համարել աշխարհաքաղաքական և արտաքին անվտանգության ռիսկերի ազդեցությունը:

Տարածաշրջանային կապակցվածության և առևտրի զարգացման տեսանկյունից կարևոր է նաև Trump Route for International Peace and Prosperity (TRIPP) նախաձեռնությունը:

«BB-/B» վարկանիշի դրական կանխատեսումը վկայում է, որ S&P-ն Հայաստանի վարկունակության բարելավման հնարավորություն է տեսնում: Վարկանիշի բարձրացման նախադրյալ կարող են դառնալ արտաքին դիրքի հետագա ամրապնդումը, արտարժութային պահուստների շարունակական աճը, Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման առաջընթացը և տարածաշրջանային աշխարհաքաղաքական ռիսկերի կայուն նվազումը: Ընդհակառակը, տարածաշրջանային լարվածության էական սրացումը կամ Ռուսաստանից աշխատուժի և կապիտալի հոսքերի կտրուկ հակադարձումը կարող են հանգեցնել դրական կանխատեսման վերանայմանը և այն կայուն մակարդակի վերադարձին:

S&P Global վարկանիշ Հայաստան 2026

Տարի	Վարկանիշ
2021	B+
2022	B+
2023	BB-
2024	BB-
2025	BB-/B
2026	**BB-/B**

Տնտեսական ազատության համաթիվ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ազատության համաթիվ Հայաստան 2026

Հրապարակում է Heritage Foundation կազմակերպությունը

Տնտեսական ազատության ինդեքսը չափում է տնտեսական ազատությունը՝ հիմնվելով 12 քանակական և որակական գործոնների վրա, որոնք խմբավորված են տնտեսական ազատության հետևյալ չորս հենասյուներում:

- **Օրենքի գերակայություն** (սեփականության իրավունք, կառավարության բացվածություն, դատական արդյունավետություն):
- **Կառավարության չափ** (կառավարության ծախսեր, հարկային բեռ, ֆինանսական առողջություն):
- **Կարգավորման արդյունավետություն** (բիզնեսի ազատություն, աշխատանքային ազատություն, դրամավարկային ազատություն):
- **Շուկաների բացվածքություն** (առևտրի ազատություն, ներդրումային ազատություն, ֆինանսական ազատություն):

Տարի	Դիրք	Միավոր
2019	47	67.7
2020	34	70.6
2021	32	71.9
2022	58	65.3
2023	50	65.1
2024	47	64.9
2025	57	65.4
2026	52	67.1

Գլոբալ նորարարության համաթիվ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հրապարակում է մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (WIPO)

Գլոբալ նորարարության ինդեքսը (ԳԻԻ) չափում է նորարարության զարկերակը՝ տնտեսական և աշխարհաքաղաքական անորոշությամբ լի միջավայրի ֆոնին:

Այն բացահայտում է աշխարհի ամենանորարարական տնտեսությունները, դասակարգում մոտ 139 տնտեսությունների նորարարական կատարողականը՝ ընդգծելով նորարարության ուժեղ և թույլ կողմերը:

ԳԻԻ-ն կազմված է երեք ինդեքսներից՝ ընդհանուր ԳԻԻ, նորարարության մուտքի ենթաինդեքս և նորարարության արդյունքի ենթաինդեքս:

Նորարարության մուտքի ենթաինդեքսը բաղկացած է հինգ հենասյուներից՝ (հաստատություններ, մարդկային կապիտալ և հետազոտություն, ենթակառուցվածքներ, շուկայի բարդություն, բիզնեսի բարդություն):

Նորարարության արդյունքի ենթաինդեքսը տեղեկատվություն է տրամադրում տնտեսությունների նորարարական գործունեության արդյունքների մասին: Կան երկու արդյունքի հենասյուներ՝ գիտելիքների և տեխնոլոգիաների արդյունքներ ու ստեղծագործական արդյունքներ:

Գլոբալ նորարարության համաթիվ Հայաստան 2026

Տարի	Դիրք	Միավոր
2019	64	33.98
2020	61	32.64
2021	69	31.4
2022	80	26.6
2023	72	28.0
2024	63	30.5
2025	59	30.4
2026	59	31.6

Ճանապարհոր-դության և զբոսաշրջության զարգացման համաթիվ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ճանապարհորդության և զբոսաշրջության զարգացման համաթիվ Հայաստան 2026

Հրատարակվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից

Համաթիվը չափում է այն գործոնների և քաղաքականությունների ամբողջությունը, որոնք ապահովում են ճանապարհորդության և զբոսաշրջության կայուն զարգացումը:

Համաթիվը բաղկացած է հինգ չափորոշիչներից (բարենպաստ միջավայր, ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի քաղաքականություն և բարենպաստ միջավայր, զբոսաշրջության և ճանապարհորդության ռեսուրսներ, զբոսաշրջության և ճանապարհորդության կայունություն, ենթակառուցվածքներ և ծառայություններ), 17 հիմնական ցուցիչներից և 102 առանձին ցուցանիշներից, որոնք բաշխված են ըստ հիմնական ցուցիչների:

Տարի	Դիրք	Միավոր
2017	84	3.53
2019	79	3.7
2021	61	4.0
2024	72	3.73
2026	72	3.81

Կոռուպցիայի ընկալման համաթիվ

Հրապարակվում է Transparency International կազմակերպության կողմից

Transparency International կազմակերպությունը դասակարգում է 182 երկրները և տարածքները՝ ելնելով պետական հատվածում ենթադրվող կոռուպցիայի մակարդակից և գնահատում է դրանք 0-ից (բարձր կոռումպանցված) մինչև 100 (ցածր կոռուպանցված) սանդղակով:

Հայաստանը ընդունել է կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրություն և ռազմավարություններ, որոնք համապատասխանում են միջազգային չափանիշներին: Հետագա առաջընթացը այժմ կախված է դատական և դատախազական համակարգի անկախության և արդյունավետության ամրապնդումից, ինչպես նաև ընդունված բարեփոխումների շարունակական կիրառումից: Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել կարգավորող դաշտում, սակայն գործնական կիրառման մակարդակում դեռ կան բացեր:

Հայաստանը շարունակել է ունենալ հակակոռուպցիոն բարեփոխումների արդյունքներ, սակայն առաջընթացը դանդաղել է: Հետհեղափոխական շրջանում իրականացվել են համակարգային կոռուպցիայի դեմ պայքարի քայլեր:

Սակայն շարունակում են մնալ խնդիրներ՝ կապված իրավունքի գերակայության, դատական համակարգի և ինստիտուտների ամրապնդման հետ:

2026թ. ցուցանիշը կհրապարակվի 2027 թվականի փետրվար-մարտին

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի ընկալման համաթիվ Հայաստան 2025

Տարի	Դիրք	Միավոր
2019	75	42
2020	60	49
2021	57	49
2022	63	46
2023	62	47
2024	63	47
2025	**65**	**46**